Արձանագրություն N 5

N <<ՆՀԿ-ԲՄԾՁԲ-18/1>>

Ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 11 հունվարի 2018թ.
ժ.11:30

Մասնակցում էին՝
Հայտեր բացող անդամներ՝
Կ. Կարապետյան /տնտեսագետ/
Ք. Խաչատրյան /դեղատան վարիչ/
Հանձնաժողովի նախագահ՝
Ա. Գրիգորյան /բուժական գծով փոխտնօրեն/
Հանձնաժողովի գնահատող անդամներ ՝
Ջ. Հաջյան /տնտեսական գծով փոխտն./
Ս. Ժամագործյան /երկրորդ բաժնի վարիչ/
Հանձնաժողովի քարտուղար՝
Հայկանուշ Թովմասյան

Օրակարգ

Որակավորման չափանիշների գնահատման նիստի մասին

1. Որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացրած մասնակիցների անվանումները և էլեկտրոնային փոստի հասցեները

<<ՆՀԿ-ԲՄԾՁԲ-18/1>> ծածկագրով գնման ընթացակարգին որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթեր ներկայացրել են՝

1.1 <<Եղվարդի Նեկտար>> ՍՊԸ, էլ.փոստ՝ exvardnektar@mail.ru

2. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

2.1 <<Եղվարդի Նեկտար>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

3.Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

3.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 46-րդ կետի դրույթներով

<<Եղվարդի Նեկտար>> ՍՊԸ-ի Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ ներկայացրած (եզրակացություն) հայտարարությունը համարել իրականությանը համապատասխանող՝ հիմք ընդունելով **<<ՆՀԿ-ԲՄԾՁԲ-18/1>>** ծածկագրով հրավերի I մասի 8.13 կետի 4 ենթակետում նշված փաստաթղթերի առկայությունը:

3.2 <<Եղվարդի Նեկտար>> ՍՊԸ-ի ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ – 0

4. Ըստ որի գնահատող հանձնաժողովը որոշեց՝

4.1 **<<ՆՀԿ-ԲՄԾՁԲ-18/1>>** ծածկագրով ընթացակարգի 1 չափաբաժնի համար առաջին տեղը զբաղեցնող է ճանաչվում <<Եղվարդի Նեկտար>> ՍՊԸ-ն, որպես ընթացակարգի բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, որի հետ առաջարկվում է կնքել պայմանագիր:

4.2 “Գնումների մասին” ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը /21.01.2018/:

4.3 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

5 <u>Շահերի բախման բացակայության մասին</u>

<<**ՆՀԿ-ԲՄԾՁԲ-18/1**>>ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նշված ծածկագրով գնման ընթացակարգի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի հնահատման նիստից հետո հայտարարում է, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունի շահերի բախում:

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ա. Գրիգորյան

Անդամներ՝ _____ Ջ. Հաջյան

_____ Ս. Ժամագործյան

_____ Կ. Կարապետյան

_____ Ք. Խաչատրյան

Քարտուղար՝ _____ Հ. Թովմասյան